ԻՎԱՆ ԻԼՅԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾԱՄՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ՀԱՅՐԵՆԱՍԵՐԻ ՕՐԱԳՐԻՑ[1]

Այն, որ մարդը սիրում է յուր հայրենիքն ու հավատարիմ է յուր ժողովրդին, բնական է, գովելի, պատվարժան: Իսկ այլ կերպ կարո՞ղ է լինել: Այլ կերպ չի կարող լինել: Մարդը նման է ծառի՝ բոլոր արմատներն ընդերքի մեջ արձակած, որտեղից կենսական ավիշ է առնում եւ այն լքում միայն այն ժամանակ, երբ ծառը հիմքից կտրում են: Մարդը նման է որդու, որ մորից ժառանգել է ամեն լավագույնը՝ սեր, առողջություն ու ոգու կորով, եւ այդպիսով յուր մեջ կրում է նրա էությունը (սուբստանցը[2]): Հայրենասերի եւ յուր Հայրենիքի միջեւ խորհրդավոր հոգեւոր նույնականություն գոյություն ունի. հայրենասերը յուր մեջ կրում է յուր «հողը», իսկ «հողը», հանձին նրա, արարող գործիք ունի:

Ամենայն ճշմարիտ հայրենասեր (լոեւյայն) խոսում է յուր ժողովրդի հետ. «Ես քոնն եմ: Ես քո հոգուց, միս ու արյունից եմ: Իմ մեջ հուրհրում է նախնիներիս նույն հոգին: Ինձ առաջնորդում է քո ինքնապահպանության բնազդը՝ այն նույնը, որ անցկացրել է քեզ քո պատմության բոլոր աղետների ու ձախորդ օրերի միջով: Իմ կրծքի շունչը քո շունչն է. հեծեծում ես դու, հեծեծում է եւ նա: Ես հզոր եմ քո ուժով, ուստի իմ զորությունը ծառայում է քո գործին: Ես քեզ հետ կապված եմ անբաժանելի «մենքով»: Ես հավատում եմ քո զորությանն ու քո ստեղծագործ շավիղներին: Քո լեզուն նաեւ իմ լեզուն է, եւ երբ ես ստեղծագործում եմ, ստեղծագործում եմ քո պատկերով ու նմանությամբ: Ես ապրում եմ քեզ հետ. քեզ պես հայում ու մտածում. ես անսահման ուրախ կլինեի, եթե օժտված լինեի քո բոլոր շնորհներով ու ունակություններով. սրտի ծածուկ ցավով եմ խորհրդածում քո թուլությունների, քո անկատարությունների

---

[1] *Թարգմանությունը կատարված է հետեւյալ հրատարակությունից՝* И. Ильин, Огни Жизни, Москва, «Русская книга — XXI век», *2006, էջ 311—316, 297—302:*

[2] * Սուբստանց — *1. (փիլ.) Ի հակադրություն առանձին իրերի եւ առարկաների փոփոխական հատկությունների՝ գոյություն ունեցող ամեն ինչի անփոփոխ հիմքը: 2. Հիմք, որեւէ բանի էություն:*

շուրջ: Քո պետական շահը նաեւ իմ շահն է: Հպարտ եմ, որ ինչ-որ առումով հաղորդակից եմ քո փառքին: Բայց կրծոտող տրտմությունն է այրում սիրտս, երբ քեզ չարիքներ են պատում, կամ երբ դու հիվանդանում ես: Քո բարեկամները նաեւ իմ բարեկամներն են, իսկ քո թշնամիները՝ իմ թշնամիները: Քեզ է պատկանում իմ կյանքը, իսկ ինձ՝ քո հողը: Քո հուսալի զորքը նաեւ իմ զորքն է, եւ նա, ով ձեռք է բարձրացնում քեզ վրա, ձեռք է բարձրացնում ինձ վրա: Ես չեմ քեզ ընտրել. դու ես ինձ քո արգանդում կրել, պահպանել ու դաստիարակել. եւ այն բանի համար, որ լույս աշխարհ ես բերել ինձ ու շնորհներով օժտել, ես խոնարհությամբ ու երախտագիտությամբ ընդունում եմ քեզ եւ քեզ հավատարիմ մնալով՝ ազատ ամփոփում եմ քեզ սրտիս մեջ: Մենք մի ամբողջություն ենք. մենք կենդանի նույնություն ենք*...»:*

Երբ հայրենասերի սիրտն այսպես է խոսում ժողովրդի հետ, ճիշտ է վարվում եւ ձեւավորում է երկրային կյանքի ամենանշանակալից՝ ստեղծագործական առումով արդյունավետ աղերսներից մեկը: Երբ հայրենասերն այսպես է խոսում ու այսպես գործում, անարդարացի կլիներ մեղադրել նրան ազգային մեծամտության մեջ: Քանի որ մեծամտությունը սեր չէ, ճշմարիտ բարեկամական միասնություն չէ, այլ ամբարտավանություն: Իսկ հայրենասերին մեծամտություն վայել չէ: Մեծամտությունը հոգեւոր կուրությունից *է բխում եւ յուր մեջ* պատրանքներ *է ծնում: Իրական հայրենասիրությունը ամենեւին կուրություն չէ. նա խուսանավում է նաեւ ամեն տեսակի պատրանքից. ընդհակառակը, կոչված է իրատեսորեն նայելու իրերին, գնահատելու ու ըստ այդմ գործելու: Ով իրերին իրատեսորեն է նայում, տեսնում է դրանք այնպիսին, ինչպիսին որ են. տեսնում է յուր ժողովրդի թույլ եւ ուժեղ կողմերը, տեսնում այլ ժողովուրդների վրիպումներն ու նվաճումները: Սա մի բան է, որ անպայմանորեն պիտի հատուկ լինի հայրենասերին, քանզի* հոգու հուր ու հայացքի սթափություն է: *Աստված պահպանում է նրան մեծամտությունից եւ ազգային պարծենկոտությունից: Չէ՞ որ այն սկիզբ է առնում միամիտ վեհության մոլուցքից եւ յուր աղետալի գագաթնակետին հասնում քաղաքական ամբարհավաճության մեջ:*

Եթե ես սիրում եմ իմ ժողովրդին, ապա պիտի հիմնավորապես ճանաչեմ նրա պատմական լինելությունը, վտանգները, բնավորության յուրօրինակությունը, նրա տարածքային, քաղաքական ու տնտեսական

խնդիրները, հոգեւոր գործողության (ակտի[3]) կառուցվածքը. միով բանիվ՝ նրա բոլոր ազգային առաքինություններն ու արատները, նրա նվաճումները, նրա հետամնացությունը, այն ամենը, ինչ հատուկ է նրան, վերաբերում է նրան, պակասում է նրան: Այդ ամենը ես պետք է մանրամասնորեն իմանամ եւ արդարացի գնահատեմ. ոչինչ չթաքցնեմ, ոչինչ չչափազանցնեմ, ոչինչ չնվազեցնեմ: Լավը բարին է. նա պիտի ծավալվի ու փթթի: Վատը չարն է. այն պիտի հաղթահարվի ժողովրդի նոր դաստիարակությամբ: Ճանաչելով իմ ժողովրդին՝ ես նրանից ոչինչ չեմ թաքցնի. բարին կարդարացնեմ, որպեսզի մարդիկ իմանան, թե ինչն է պետք պահպանել, վատի մասին ոչ միայն չեմ լռի, այլեւ կբացահայտեմ, ի հայտ կբերեմ, կնկարագրեմ, կքննեմ դրա պատճառներն ու աղբյուրները, ժողովրդին կոչ կանեմ սթափվել, մաքրագործվել, ճանապարհ հարթել այն հաղթահարելու:

Սերը չպիտի կույր լինի. ընդհակառակը, նա պիտի սիրողի հայացքը պարզ ու խորաթափանց դարձնի: Սիրելի ժողովրդին միամտաբար իդեալականացնելու կարիք չկա: Բացի այդ, նա դրա կարիքը չունի էլ: Իրապես ծառայել ժողովրդին՝ չի նշանակում ամբոխավարի պես մեծարել նրան, շողոքորթել ու զարկ տալ ազգային մեծամտությանը, այլ, ընդհակառակը, սթափ, անաչառ գնահատել, հստակ վերլուծությամբ ի հայտ բերել նրա վրիպումներն ու թերությունները: Պատմականորեն այստեղով է անցնում ազգային ամբոխավարությունն *ու* ազգային մարգարեությունը *սահմանազատող գիծը. ամբոխավարը ջրհորներ թունավորող է, իսկ մարգարեն՝* դաստիարակ: *Ընդ որում, դաստիարակությունը կույր ամբարտավանության չի առաջնորդում, այլ ընթանում է համեստության, հանապազ խորհրդածության ու խոնարհության ճանապարհներով:*

Այսպես ուրեմն, ազգային գոռոզությունն սկսվում է անդ, ուր ժողովուրդը լռվել է պարզունակ ինքնագիտակցության մակարդակում, որտեղից նրա մարգարեները, գաղափարախոսներն ու դաստիարակներն ի վիճակի չեն նրան դուրս բերել:

Պարզունակ ինքնագիտակցությունն այն է, որ մարդը կաշկանդված է սեփական իմիճաբընկալմամբ եւ դրանից անդին ոչինչ չի տեսնում: *Այն, ինչ նա ըմբռնում է յուր մեջ ու յուր համար, նրան այնքան կարեւոր ու կատարյալ է թվում, որ այդ սահմանն անցնելու ձգտում չունի: Անձնականը*

[3] * Ակտ — *Առհասարակ՝ գործողություն, գործ, իսկ հեղինակի ըմբռնմամբ՝ մարդու «անձնական հոգեւոր վիճակ»:*

զբաղեցնում է նրա ողջ ուշադրությունն ու սերը: Նրա եսը դառնում է նրա ցանկությունների, նրա կամքի, ջանքերի ու ուրախությունների միակ կենտրոնը. իր իսկ սեփական իրականությանը նա չի էլ կասկածում, իսկ մնացյալ ամեն ինչ նրան առնվազն կա՛մ խնդրահարույց, կա՛մ անէական է թվում: Հար եւ նման մի բանի ենք հանդիպում Անդերսենի հեքիաթում, որում ասվում է, թե ինչպես տաք վառարանի ետեւում լավ տեղավորված ծեր բադն ու ծեր կատուն իրենք իրենց աշխարհի կեսն էին համարում, ընդ որում՝ լավագույն կեսը: Այս ամենից առօրյայում վանող եսասիրություն է առաջանում. հոգեախտաբանությունը (պսիխոպաթոլոգիա) կարող էր այս երեւույթը «աուտիզմ»[4] կամ «աուտոէրոտիզմ» անվանել, իսկ փիլիսոփան կկիրառեր «եսակենտրոնություն»[5] («էգոցենտրիզմ») կամ «սոլիպսիզմ»[6] եզրերը: Հասարակական կյանքում սրանից նեղմիտ դասակարգային քաղաքականություն է առաջ գալիս, իսկ առանձին ժողովուրդների կյանքում՝ ազգային ամբարտավանություն:

Պարզունակ ինքնագիտակցության տեր մարդը մորթապաշտ է՝ ուրիշի վիճակի մեջ մտնելու անընդունակ: Երբեմն մինչեւ իսկ չի էլ կասկածում, որ դա առհասարակ հնարավոր է, չգիտի՝ ինչից սկսել: Նա միամիտ է յուր եսակենտրոնության մեջ: Նրա «էգոն»՝ եսը, նրա համար ամեն ինչ է. դա նրա աշխարհն է, նրա գանձը, նրա նպատակն ու նրա հպարտությունը: Խորթ է նրա համար կարեկցանքն այլ մարդկանց եւ ժողովուրդների նկատմամբ. այն էլ ասենք, որ դա նրան բնավ պետք էլ չէ. չէ՞ որ ինքը տեղով մեկ կատարելություն է: Նույնքան էլ քիչ գիտի նաեւ ուրիշի վիճակի մեջ մտնելու, խղճահարության, նրբանկատության եւ, վերջապես, ուշադրության մասին: Նա կյանքի եւ երկրագնդի կենտրոնն է, իսկ մնացյալ ամեն ինչ՝ այնքանով, որքանով որ... Մնացյալ ամեն ինչ ընդամենը միջավայր է, որում նա փայլում է (սա Մաքս Շտիրների[7]՝

---

[4] * Աուտիզմ — *Ուղեղի զարգացման խաթարման հետեւանքով առաջ եկող խանգարվածություն, որը հատկորոշվում է խիստ արտահայտված շփման անբավարարությամբ, նաեւ սահմանափակ հետաքրքրություններով եւ կրկնվող գործողություններով:*

[5] * Եսակենտրոնություն — *Լատիներեն էգոցենտրիզմ՝ «ես» եւ «կենտրոն» բառերից. վերաբերմունք աշխարհի նկատմամբ, որը հատկորոշվում է սեփական, անհատական եսի վրա կենտրոնացվածությամբ:*

[6] * Սոլիպսիզմ — *Սուբյեկտիվ իդեալիստական տեսություն, ըստ որի՝ գոյություն ունեն միայն մարդը եւ նրա գիտակցությունը, իսկ օբյեկտիվ աշխարհը, այդ թվում եւ՝ մյուս մարդիկ, գոյություն ունեն միայն անհատի գիտակցության մեջ:*

[7] Մաքս Շտիրներ *(իսկական անունը՝ Կասպար Շմիդտ (1806–1856), գերմանացի նորհեգելական փիլիսոփա: Մայրահեղ ինդիվիդուալիզմի եւ եսակենտրոնության ջատագով:*

*«եզակիությունն ու յուր սեփականությունը» քարոզող անբարոյական-պրագմատիկ սոլիպսիզմի՝ այդ բնավ ոչ միամիտ ջատագովի հիմնարար գաղափարն էր)։ Ուշիուշով մինչեւ վերջ ընթերցելով նրա գիրքը՝ պարզապես զարմանքից քարանում ես, թե այս մարդն ինչ աստիճանի է զուրկ հումորից (*humor sui*)։*

Նման մի բան կատարվում է ժողովրդի պարզունակ գիտակցության հետ. նա ընկնում է ազգային մեծամտության գիրկը, որում եւ միամտություն, եւ ամբարտավանություն է կարդացվում։ Ազգային մեծամտությունը հետեւանք է ինքնահիացության, որը ժողովուրդներին ասես գելարանի[8] մեջ է սեղմած պահում։ Մեկ անգամ ի հայտ գալով՝ նա յուր ուժերը քաղում է երկու առողջ, սակայն անշրջահայացության արդյունքում վտանգավոր դրդապատճառներից՝ ինֆինապահպանության բնազդից եւ փառասիրության բնազդից։ Ինքնապահպանության բնազդն ազգային մեծամտությանը հատուկ թափ է հաղորդում, իսկ հավակնություններին՝ անունդ մատակարարում։ Փառասիրության բնազդը այլասերում է նրա արժեքային պատկերացումները եւ հպարտության գիրկը նետում։ Սրա հետեւանքով ծայր են առնում սեփական անձի չափազանց մեծ գերագնահատումն ու այլոց թերագնահատումը։ Հաչս այս պարծենկոտի՝ մյուս ժողովուրդները նսեմ են երեւում. կա՛մ յուր իսկ սեփական պատճենն է, հետեւաբար ինքնուրույն գոյության որեւիցե իրավունք չունի, կա՛մ ավելի ցածրակարգ ժողովուրդ է, հետեւաբար չպիտի կանգնի առաջնակարգ ժողովրդի ճանապարհին։ Ամեն դեպքում այլ ժողովուրդների կյանքի ու ստեղծագործության մեջ ներթափանցումը անտեղի ու անցանկալի է, քանզի դա «դավաճանություն» կորակվեր սեփական ժողովրդի նկատմամբ։ Մյուս ժողովուրդներն ընդամենը ուսումնասիրության նյութ են, հատկապես հարաճուն օտարացման դեպքում. դրանք, անտարակույս, կյանքում ո՛չ իրավունակ, ո՛չ էլ ինքնուրույն սուբյեկտներ են, որոնց հետ կարելի է բավական ազատորեն վարվել։ Այստեղից են սկիզբ առնում այլ ժողովուրդների յուրահատուկ չիմացությունը, փոխըմբռնման բացակայությունը, պատրանքների կուտակումն ու դիվանագիտական վրիպումները, որոնք լիուլի բնորոշ են հարաճուն ու ահագնացող ազգային մեծամտությանը։

Եւ դա ամեն ինչ մեծարելու ու գովաբանելու պատճառով է՝ հայրենիքի նկատմամբ սիրո, մշակույթի մեծ վարպետներով հպարտանալու,

[8] * Գելարան — *1. Գործիք (մամուլ, կոճղ, փոկ եւն), որով մի բան պրկում՝ ճմլում են։ 2. Նույնպիսի գործիք՝ պատժվողին տանջելու համար։*

սեփական ժողովրդի զորության գնահատականի, դրացի ժողովուրդների նկատմամբ վերաբերմունքի պատճառով: Իսկ եթե այս մեծամտությունը համակի ժողովրդի դաստիարակներին ու մարգարեներին, ապա նրա ինքնահավանությունը կվերաճի իսկական գոռոզության. իսկ եթե ժողովուրդն ու նրա դաստիարակները զուսպ ու մաքրագործող ինքնահեգնանքի զգացման պակաս ունենան, այդժամ լոպպազության սայլն աննկասելի զառիվար կսլանա յուր կործանմանն ընդառաջ: Այդժամ կավանդվեն պատմականորեն մեծ ժողովրդի եւ աշխարհում յուր առաքելության մասին տխուր դասերը: Եւ այս ժողովրդի համեմատությամբ մյուսներն ընդամենը մեծ խութեր են յուր ճանապարհին կամ պարզապես պատմական թյուրիմացություններ...

Իրականում, սակայն, մարդկանց աշխարհը կարելի է համեմատել Աստծու պարտեզի հետ: Միայն մշտնջենավոր պարտիզպանը գիտի, թե ինչ ծաղիկներ, երբ եւ որտեղ է տնկել եւ ապագայում ինչպիսիք պիտի տնկի: Յուր վեհ գաղտնիքները նա, սակայն, գաղտնի է պահում եւ թույլ չի տալիս գեթ մի ակնթարթ աչք գցել դրանց վրա: Յուրաքանչյուր ժողովուրդ՝ իբրեւ Աստծու ծաղիկ, մտահոգված է այնու, որ յուր ծաղկաբույլն առավելագույնս փթթի եւ զարմանահրաշ անուշահոտությամբ վարձահատույց լինի յուր պարտիզպանին: Բայց ոչ մի ծաղիկ որեւիցե հիմք չունի իրեն Աստծու պարտեզում գերագույնը համարելու՝ արհամարհելով ու իրենով այլոց աճը խեղդելով:

Մեզ համար ավելորդ չէ այս հարցի պատասխանի իմացությունը. իրո՞ք այս երկրային դրախտում փթթուն աճի համար կանխորոշված գլխավոր ծաղիկներ կան, եւ իրո՞ք ծաղիկներ կան, որոնք որեւիցե այլ արժեք չունեն, քան պատմության գոմաղբ լինելը: Պարզ է, սակայն, մի բան. Աստծու գլխավոր ծաղիկն իրապես հակված չէ մեծամտության, իսկ անչափ հպարտացած ծաղիկը լավ օր չի տեսնի:

ԿՅԱՆՔՆ ԱՌԱՆՑ ՍՐԲՈՒԹՅԱՆ

Մեր ժամանակների առաջին մեծ չարիքը անսուրբ կյանքն է։

Անճկատ է *մեր կյանքը զրկվում սրբություններից։ Երբեմն մինչեւ իսկ չենք էլ կասկածում՝ երբ է սկիզբ առնում եւ ինչպես ընթանում. մենք մի տեսակ մոռանում ենք այդ մասին՝ ամենեւին չմտածելով վտանգի մասին, եւ ահա, խնդրեմ, ամեն ինչ կատարված է։ Մեզանից շատերը դա չեն նկատում։ Իսկ հանկարծ նկատելիս էլ բավական զարմանում են ու անգամ տրտմում, քանզի ոչ ոք այդ բանը չէր կամենում եւ չի կարող ասել՝ ինչպես դա պատահեց։ Իսկ պատճառը ոչ թե գործերի, այլ անհոգության եւ անփութության մեջ է. մենք ի վիճակի չեղանք, չկամեցանք մեր մեջ փայփայել հակոտնյան՝* ճոգեւոր լռությունն[9] ու կյանքի խոռությունը։

Ջէ՞ որ մեր երկրային կյանքը յուր նվիրական, գերագույն իմաստն ունի։ Նա առօրեականության եւ սին ունայնության մակերեսին չէ։ Նա չի հավակնում ու չի պարտադրում։ Նա կամենում է ցանկալի, ազատորեն ձեւակերպված, որոնելի, գտնված, ձեռք բերված ու խնամքով պահպանված լինել։ Նա մեզանից անբռնազբոսիկ ճանաչում ու վճռական նախապատվություն է պահանջում։ Միայն այդժամ նա մեզ համար կբացվի հեշտ ու առատաձեռնորեն, իրենով կլցնի մեր կյանքը։ Իսկ եթե մենք չբավարարենք այդ պահանջը, չարձագանքենք յուր հարցումներին, որոնումներին ու աջակցություն գտնելու հույսին, այդժամ կյանքի վեհ իմաստը կսպրդի մեզանից, եւ կյանքն աննկատորեն կսկսի պղծվել։ Եւ դա տեղի կունենա ոչ թե այն պատճառով, որ կյանքն ինքնին կիմաստազրկվի, այլ այն պատճառով, որ կսկսենք ապրել այնպես, ինչպես, ասենք, այն անիմաստ եղած լիներ։ *Իրականում ամեն ինչ կմնա այնպիսին, ինչպիսին որ է, այսինքն՝ ինչպիսին որ է միշտ։ Ամեն ինչ՝ անձրեւի կաթիլից մինչեւ վեհվեհուն քարայծը, թռչունների ճռվողյունից մինչեւ մայրական քնքշալից գորովանքը, հյուսիսափայլից մինչեւ նահատակի հերոսական մահը, օժտված է կատարյալ իմաստով, կմնա հրաշալիորեն կարգավորված, էականորեն (սուբստանցիոնալ) հագեցած, Աստծու*

[9] * Լռություն — *1. լիքը լինելը։ 2. լի՝ կատարյալ լինելը, ամբողջություն։ 3. լրիվ՝ անթերի լինելը՝ լրիվություն։*

շնչով համակված: Ամեն ինչ ինքն իր մեջ հաստատված է, ամեն ինչ աստվածային գրերով գրված տեքստ էլ կմնա. ամեն ինչ իմաստության թեւերով հյուսված՝ Աստծու գործվածք է. ամեն ինչ խորհրդավոր երաժշտություն է՝ պահպանված հստակ տոնայնության ու հոգին ազատագրող ներդաշնության մեջ: Իսկ մենք՝ այդ մասին այլեւս ոչինչ չիմացողներս, ավելի ճիշտ՝ իմանալ չկամեցողներս, մեզ պահում ենք այնպես, ասես կապը կտրած ու ամեն տեսակ մոլության տրված լինենք: *Մենք արդեն չենք քննում այդ տեքստը. պատառոտել ենք այդ հավերժական գործվածքը. խլացել ու չենք ունկնդրում այդ երաժշտությունը: Արդյունքում մենք ակնհայտորեն խեղաթյուրեցինք մեր գոյությունը: Եւ մեր բովանդակ կյանքը դարձավ սարսափազդու ճակատագրական թյուրիմացություն, «սխալների ողբերգություն». դարձավ* սուբյեկտիվորեն անիմաստ, եղեիմ ու մեոյալ՝ *հար եւ նման մերթ ողորմելի արարածի ու վիժվածքի անբովանդակ՝ գորշ կյանքի, մերթ դանդաղ անկման, մերթ կատարյալ սնանկության, մերթ քաոսային աղբակույտի:*

Եւ մեզ համար այլեւս առ ոչինչ է բնության եւ պատմության աստվածային ծրագիրը. առ ոչինչ է հոգեւոր մշակույթի լուսատու խորքը. հիմա նա մեզ համար իսկ եւ իսկ այն է, ինչ «շոշափելի խավարը». մեզ համար ամենայն ինչ անպետք ու անկշիռ է, ինչպես ծառից ընկած չոր տերեւը, ինչպես քամուց քշված փողոցային աղբը: Մենք անագորույն ու ամոլ ենք դառնում, բայց եւ՝ ամբարտավան ու կրքերով բռնված. մեր իսկ կամքով աստվածային բովանդակությունից պարպված տիեզերքը մեզ անհեթեթ է թվում ու ծաղրաբար ծիծաղում մեզ վրա...

Հետեւաբար, մարդկային կյանքի յուրօրինակ «որակ» գոյություն ունի, եւ ըստ այդմ էլ՝ դրան համապատասխան «չափում», մասշտաբ եւ չափանիշ, որոնց հետ մենք պիտի հաշվի նստենք: Սույն չափանիշն ամենեւին նույնական չէ այնպիսի չափանիշներին, ինչպիսիք են կրոնական ուղղադավանությունը, բարոյականությունը, արվեստը, գիտելիքի հավաստիությունը, հավատարմությունն օրենքին (լոյալություն[10]): Այն, ավելի ճիշտ, հարկ էր անվանել հոգեւոր ճշմանակալիության *չափանիշ, իսկ տվյալ դեպքում՝ կյանքի դատարկության, պղծման չափանիշ:*

Սույն հատկությունը կարելի է նաեւ առավել ստույգ հատկորոշել. այն ծնունդ է առնում այնտեղ, որտեղ մարդու մեջ հոգեւոր սկզբունքը

[10] * լոյալ — *արտաքուստ օրինապահ, չեզոք, հավատարիմ օրենքի նկատմամբ (թեկուզ ներքնապես հակառակ էլ լինի այդ օրենքին):*

մարում կամ սպառվում է, ինչը, այսպիսով, կյանքի նույն անհոգեղենություն *է: Այն ծայր է առնում այնտեղ, որտեղ մարդկային* թեթեւամտություն, *որը նույնիսկ տակավին պատկերացում չունի, թե ինչ է խորհրդաստուբյունը, միամտաբար ու անհոգ սահում է կենցաղային ալիքների վրայով: Այն սկիզբ է առնում այնտեղ, որտեղ կյանքի գծուծությունը յուր բովանդակ կարճատեսությամբ ու տափակությամբ դառնում է գերիշխան: Այսպիսով՝ այն սկիզբ է առնում* կրոնական *բթամտությունից ու ահագնանում այն ժամանակ, երբ կրոնական բթամտացումը դառնում է* խիճճավստահ *ու* անձնապաստան, *վերջնականապես հաստատվում մարդու մեջ եւ* խիճճամեծարման *դրոշմով կնքվում: Այդժամ այդ հատկությունն ինքն իրեն ընկալում է իբրեւ ինչ-որ ինքնին հասկանալի, միակ ճիշտ ու խելացի, որոշակի «աշխարհայացքի» մեջ առնված մի բան:*

Սույն աշխարհայացքը սոսկ անաստված չէ. կրոնական առումով այն նույնիսկ բթամիտ ու հանդուգն է: Ոչինչ չիմանալով հոգու մասին՝ ծաղրուծանակի է ենթարկում այն: Նա ռոմանտիկ չէ, հեգնող է, չորուցամաք, դժգույն, միով բանիվ՝ անապատ է: Նրա մասին այն էլ կարելի է ասել, որ ծայրաստիճան սթափ, մեքենայական ու մատերիալիստական է: Իսկ եթե նրա՝ աշխարհի պատկերը զննելիս լինենք, այնպիսի զգացողություն կունենանք, որ տիեզերքի բոլոր գույները խամրել ու նսեմացել են. որ թռչունները լռել ու անկենդան վայր են ընկել հողին. որ աշխարհի վրա թեւածում է անվերջանալի, հավերժական խորշակը, որը ծածկել է խորհրդավորի բոլոր խորքերը, սրբությունից զրկել բովանդակ գոյությունը: Եւ այս ամայի, Աստծուց լքված տարածքներում սանձազերծվել է համառ, դժնդակ՝ «Բոլորն ընդդեմ բոլորի պատերազմը» («bellum omnium contra omnes»*)*[11], որի վերջը չի երեւում: Իսկ սա նշանակում է, որ կյանքը պղծված է, եւ այս պղծությունը հարկ է լիովին վերացնել: Գավաթը լի է թույնով, բայց այն պիտի խմվի մինչեւ վերջին կաթիլը:

Այս անսուրբ ճղճիմությունը կարող է աներես կերպով ամեն ինչի կպչել, ամեն ինչի մեջ արմատներ արձակել, իսկ անդ, ուր նա թափանցում ու ընդարձակվում է, ամեն ինչ այլասերվում է, ինչպես առանձին անհատի, այնպես էլ շատուշատ սերունդների կյանքում: Նա, զորօրինակ, նվաճում է հավատացյալի հոգին: Այդժամ նրա կրոնասիրությունը աստիճանաբար սմքում է, դառնում մանրախնդիր, հավակնոտ, սնոտիապաշտ, կեղծավոր՝ նմանվելով վախի ու բռնության հոգեգարության

[11] * Ժէ. դ. անգլիացի հռչակավոր փիլիսոփա Թոմաս Հոբսի ասույթը:

(պսիխոզի), աստվածամերժ կեղծ բարեպաշտության։ Այս դատարկությունը թափանցում է արվեստ, որն իսկույնեւեթ մոռանում է յուր վեհ ու խորհրդաստ կոչումը. նրա պայծառատես հայեցողությունը աղոտ է դառնում, իմաստությունն ի դերեւ ելնում, ներողամտությամբ քաջալերում է հեշտասիրության գռեհիկ ու անդիմադրելի տենչանքներին, ենթարկվում ձեւապաշտական (ֆորմալիստական) պճնամոլության, կյանքի քաղաքական բնագավառում աղախին դառնում։ Ծանծաղացած գիտությունը ծայրաստիճան ինքնավստահ է դառնում՝ կարծելով, որ աշխարհում ամենայն ինչ կարելի է բացատրել մեքանայական (իմա՛ մեխանիստական[12]) եղանակով, այդու ընկնելով աներեւակայելի տափակության եւ ծայրահեղ պարզունակության գիրկը։ Սրբազան հովանուց զրկվելով՝ բարոյականությունը *դառնում է չոր, հարկադրական, անսիրտ ու երկդիմի։ Նվիրական բովանդակությունից զուրկ* հաղաբականությունը *վերածվում է անձնական հաջողության եւ իշխանության հետեւից ընկնելու, շահերի անթաքույց պատերազմի եւ շատ շուտով դառնում գաղափարազուրկ, ստեղծագործական առումով անզոր ու ամբողջատիրական (տոտալիտար)։*

Ահա այսպես է աշխարհում ի հայտ գալիս սրբությունից զրկված ճղճիմությունը։

Բարին մանրանում, աղքատանում ու անկարանում է։ Չեզոքը երկիմաստ, սառն ու վտանգավոր է դառնում։ Բայց դրա փոխարեն չարը դառնում է հավակնոտ, զորեղ ու վնասաբեր։

Բարին զրկվում է արմատներից, դառնում հեղհեղուկ ու ոչ հերոսական։ Չեզոքը դառնում է միանգամայն անտարբեր, դյուրությամբ վերացող, ծախու ու դավաճան, իսկ չարը՝ սանձարձակ, աննրբանկատ ու անզուսպ։ Կարծես ամեն ինչ Աստծուց լքված լինի, Աստուծով անկարացած, անխուսափելի վախճանին պատրաստ։

Այս ապականությունը տարածվում է մարդկային կյանքի բոլոր անդաստաններով մեկ։ Բայց մանավանդ ամայացնում է սերը։ *Անհոգեղենությունը մարդկային սերը վերածում է բնության տարրական պահանջի, ինքն իր մասին բարձրաձայնում, քմահաճորեն պահանջում, աննրբանկատորեն ու լկտիաբար գործում եւ անպատասխան մարում։*

---

[12] * Մեխանիցիզմ — *Փիլիսոփայական ուսմունք, որը աշխարհի բոլոր բարդ երեւույթները հանգեցնում է մատերիայի միատեսակ մասնիկների մեխանիկական շարժմանը, իսկ զարգացման բարդ օրինաչափությունները՝ մեխանիկայի պարզ օրենքներին։*

Հոգեւոր սկզբունքի վրա չխարսխված ամուսնությունը ո՛չ հավատարմություն է խոստանում, ո՛չ երջանկություն, ո՛չ կենսակայություն եւ ո՛չ էլ՝ առողջ դաստիարակություն: Սրբությունից զուրկ ընտանիքն սկիզբ է առնում տղայական խաղերից, որոնք տանելի կամ նույնիսկ խրախուսելի են հասարակաց տներում եւ ավարտվում են անթաքույց անառակությամբ ու ընտանիքի կազմալուծմամբ:

Սրբությունից զուրկ մտածողությունը *դառնում է երերուն ու լպրծուն: Նա այլեւս նպատակահարմարություն չի որոնում, այլեւս «համոզմունքներ» չունի: Ճշմարտացիությունն ու հավաստիությունը նրան այլեւս բացարձակապես բնորոշ չեն: Ավելին՝ շահախնդրություն ու յուր հնարավորությունների զորեղ փաստարկումներ է որդեգրում, ինչպես որ դա երբեմնի բնորոշ էր հույն սոփեստներին[13] եւ հռոմեացի հռետորներին:*

Այս կարգի գիտնականների համար միտքը ծառայություն չէ, այլ ավելի շուտ անձնական հաջողության հասնելու միջոց, հաղթանակի խաղադրույք մոլեխաղի մեջ՝ փողի հետ իշխանություն ստանալու ակնկալիքով: Այս արմատազուրկ մտածողությունը բովանդակ կյանքին արկածախնդրության երանգ է հաղորդում եւ իր էությամբ անբարոյականություն է: Ճշմարիտ իրականության մասին բնավ ոչինչ իմանալ չի կամենում, ուստի անպատասխանատվության եւ ռելյատիվիզմի[14] յուր՝ էական հարցեր չարծարծող մանր-մունր թեմաների մեջ հասնում է ցինիզմի եւ հաճախ, ավա՜ղ, պարզունակության:

Սրբությունից զուրկ կամքը *հասարակայնորեն վտանգավոր ուժ է: Եւ որքան մեծ է այդ ուժն անհատի մեջ, այնքան վտանգավոր է մարդը: Անզուսպ ու անպարկեշտ մարդն ամեն գնով ձգտում է իշխանության, օգտագործում բոլոր եղանակները, ոտնատակ տալիս բոլոր ճանապարհները՝ գործի դնելով բոլոր միջոցները՝ ընդհուպ մինչեւ կեղծավորություն, զրպարտություն, սուտ եւ զանգվածային սպանություններ: Եւ որքան նրբամիտ է նման կամքի տերը, այնքան հնարամիտ է հանուն կյանքի մղած յուր պայքարը, այնքան ցայտուն է քրեական իրավունքի խոչընդոտները հաղթահարելու յուր ունակությունը, այնքան հաջող է նա շրջանցում իրավակարգի բացերն ու թերությունները, այնքան շատ է*

[13] * Ք. ա. ե.—Դ. դարերում փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչներ, որոնք, վեճերի ժամանակ իրենց կեղծ գրույթներն ապացուցելու համար, ընդդիմախոսներին մոլորեցնելու նպատակով, հարցերը դիտավորյալ բարդացնում ու խճճում էին:

[14] * Ռելյատիվիզմ — *իմացության տեսության իդեալիստական ուղղություն, որը ժխտում է օբյեկտիվ ճշմարտությունը՝ հիմք ընդունելով մեր բոլոր գիտելիքների հարաբերականությունը:*

«վեր» բարձրանում կյանքի աստիճաններով, այնքան վնասակար է նրա ազդեցությունը: Հենց այս չար կամքն է, որ ժողովրդավարության տակը քանդում է ու քայքայում, հենց նա է հորինել եւ կյանքի կոչել ամբողջատիրական պետության գաղափարը: Սրբությունից զուրկ այս կամքը, սակայն, դեռ յուր վերջին խոսքը չի ասել:

Աննկատ է մեր կյանքը կորցնում նվիրականը: Եւ այս գործընթացը ծայր է առնում աննշան բացթողումներից ու անփութությունից եւ մեծ ճգնաժամերով ու ցնցումներով ավարտվում: Իսկ այս չարիքների սկզբնապատճառը երեխաների ոչ հոգեւոր դաստիարակությունն է:

Թարգմանությունը՝
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ